ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը հայտարարում է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթ՝ Լոռու մարզի միասնական երթուղիների համար՝

Հ/Հ	ԵՐԹՈՒՂՈՒ				
	անվանումը և համարը	սկզբնակետը	վերջնակետը	տեսակը	սպասարկման համար պահանջվող ավտոբուսների քանակը (ներառյալ պահուստային և հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված ավտոբուսների քանակը)
1.	Վանաձոր – Երևան	Վանաձոր	Երևան	Ավտոբուս	24
2.	Սպիտակ – -Երևան	Սպիտակ	Երևան	Ավտոբուս	5
3.	Ստեփանավան - Երևան	Ստեփանավան	Երևան	Ավտոբուս	5
4.	Տաշիր - Երևան	Տաշիր	Երևան	Ավտոբուս	4
5.	Ալավերդի - Երևան	Ալավերդի	Երևան	Ավտոբուս	4
6.	Վանաձոր - Աբովյան- Երևան	Վանաձոր	Երևան	Ավտոբուս	1
7.	Թումանյան – Վանաձոր	Թումանյան	Վանաձոր	Ավտոբուս	1
8.	Վանաձոր - Սպիտակ	Վանաձոր	Սպիտակ	Ավտոբուս	1

9.	Վանաձոր - Սպիտակ	Վանաձոր	Սպիտակ	Ավտոբուս	1
10.	Ստեփանավան – Ալավերդի	Ստեփանավան	Ալավերդի	Ավտոբուս	1
11.	գ. Ֆիոլետովո – Վանաձոր	գ. Ֆիոլետովո	Վանաձոր	Ավտոբուս	1
12.	գ. Աթան – Վանաձոր	գ. Աթան	Վանաձոր	Ավտոբուս	1
13.	գ. Կուրթան – Վանաձոր	գ. Կուրթան	Վանաձոր	Ավտոբուս	1
14.	գ. Քարկոփ – Սպիտակ	գ. Քարկոփ	Սպիտակ	Ավտոբուս	1
15.	Ստեփանավան – Տաշիր	Ստեփանավան	Տաշիր	Ավտոբուս	1
16.	գ. Գոգավան – Ստեփանավան	գ. Գոգավան	Ստեփանավան	Ավտոբուս	1
17.	գ. Կուրթան – Ստեփանավան	գ. Կուրթան	Ստեփանավան	Ավտոբուս	1
18.	գ. Սարամեջ - Սպիտակ – Վանաձոր	գ. Սարամեջ	Վանաձոր	Ավտոբուս	1
					55 փաստացի + 8

ՑԱՆԿ

ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1. Հայտ՝ N 2 ձևի:

2.* Ավտոբուսների գրանցման վկայագրեր (ժամանակավոր կտրոն):

3.*Ավտոբուսի նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունքի առկայությունը հավաստող փաստաթուղթ:

4.* Ավտոբուսն այլ տեսակի վառելիքով շահագործելու համար վերասարքավորելու (կահավորելու) դեպքում՝ շահագործման և վերասարքավորման օրինականությունը հաստատող փաստաթուղթ:

5. Հավաքակայանի սեփականության կամ օգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթեր, գիշերակացով երթուղիների դեպքում վերջնակետում ավտոբուսների կայանումը, պահպանումը, նախաուղերթային տեխնիկական զննումը և վարորդների բուժզննումն ապահովելու նպատակով կնքված պայմանագրեր:

6. Ավտոկայարանային ծառայություն մատուցող կազմակերպության հետ կնքված սպասարկման նախնական պայմանագիր (գործող պայմանագրի առկայության դեպքում նախնական պայմանագիր չի պահանջվում):

7. Փակ ծրարով ներկայացնում է երթուղու սպասարկման համար առաջարկվող մեկ ուղևոր և ուղեբեռ (եթե սահմանված է) փոխադրավարձը, իսկ միջմարզային և ներմարզային երթուղիների համար՝ նաև ըստ նախատեսված միջանկյալ կանգառների (սույն պահանջը չի վերաբերում համայնքներում անցկացվող մրցույթներին):

Նշված փաստաթղթերի պատճենները ներկայացվում են մեկ օրինակից, կազմակերպության կողմից սոսնձված և ստորագրված փաթեթով:

**Չի ներկայացվում հայտ-պարտավորագիր ներկայացնելու դեպքում:*

Լոռու մարզի երթուղիների հաստատված չվացուցակներին կարելի է ծանոթանալ https://api.mtad.am//storage/pages/files/2025/11/pdf/06_17-27-sc789-690ca234e3656.pdf հղումով:

Փաթեթների բացման օրը, ժամը և վայրը՝ 2025 թվականի դեկտեմբերի 16, ժամը 11:00, ք.Երևան, Կառավարության 3-րդ մասնաշենք, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

Մրցույթի անցկացման օրը, ժամը և վայրը՝ 2025 թվականի դեկտեմբերի 22, ժամը 11:00, Կոտայքի մարզ, Վերին Պտղնի համայնք, Երևան-Սևան ավտոմայրուղի, 2/14 շենք

Հայտը ներկայացնելու օրը, ժամը, վայրը և վերջնաժամկետը՝ 2025 թվականի դեկտեմբերի 15, մինչև 17:00, ք.Երևան, Կառավարության 3-րդ մասնաշենք, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

Հեռախոսահամարը՝ լրացուցիչ տեղեկություն ստանալու համար՝ 010511356

Էլեկտրոնային փոստի հասցեն՝ **mtai.secretariat@gmail.com**

Մրցույթին ներկայացվող ավտոբուսների ընդհանուր թվի առնվազն

10%-ը պետք է հարմարեցված լինեն հաշմանդամների (տեղաշարժվելու, տեսողության և լսողության խնդիրներ ունեցող անձանց) նստեցման և իջեցման համար:

Մրցույթը անցկացվում է ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1994-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) պահանջների համաձայն:

Հայտ-պարտավորագրով մասնակցելու դեպքում Կարգի 22.1 կետի պահանջներին համապատասխան անհրաժեշտ է մրցույթին հայտ ներկայացրած կազմակերպության հաշվեհամարից Հ/Հ 900008000730 հաշվեհամարին մինչև 2025 թվականի դեկտեմբերի 19-ը ժամը 12:00 փոխանցել սահմանված քանակով ավտոբուսների ընդհանուր արժեքի 2.5 տոկոսին համարժեք գումար: